

DE PROFUNDIS

✽

Բրնուրթիւնը ունի Օրէնք, կանոն ու կարգ,
 Ու կը բանայ սակաւ գաղտնիքն իր մեր միտքին՝
 Քոզմոս է ան ... Ունի անուո՛ւս եւ Նըպասակ.
 Ըլլայ թէ՛ եւ այս անմեկին:

Եւ ուր օրէնք կայ, անպայման հոն կայ միտք ալ.
 Միտքն է միտքին հասկընալի իր օրէնքով.
 Ինչ որ չունի մէկը անուո՛ւս չի կըրնար տալ.
 Ո՞վ է օժտած մարդը միտքով:

Ուրկէ՞ է խիղճն ու ըզգացումն արդարութեան,
 Տենչը վրսեմ կասարներու ... Հոգիին մէջ
 Ուրկէ՞ ինկած՝ սիրոյ, յոյսի, եղբայրութեան
 Յաւերժական կայծը անւէջ:

Ինչո՞ւ խաչուիլ երազի մը համար անգոյ,
 Կամ նենհերիլ իտէալի մը ի խրնդիր.
 Ի՞նչ կ'որոնէ անվերջօրէն հոգին զըժգոյ.
 Դէպ' ո՞ւր ձգտումն այս պարտադիր:

.

Գաղտնիքներու ըսեմարան, յաւերժասեւ,
 Վրսեմ է Մայր Բրնուրթիւնը ... Անմահ է ան.
 Սրբանորոգ, մրբսանդով, մրբսապարգեւ ...
 Մարդը զաւակն է Բրնութեան:

(ՎԵՐՋ)

Մ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

